ԿԱՐԾԻՔ

ՌԱՖԻԿ ԱՐԱՄԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ՝ «ԹՈՒՐՔ-ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ» ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ (1950-1990-ԱԿԱՆ ԹԹ.) ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռաֆիկ Խաչատրյանի՝ «Թուրք-հունական հարաբերությունները «դաշնակցային կոնֆլիկտների» համապատկերում (1950-1990-ական թթ.) ատենախոսության թեման արդիական է՝ նկատի առնելով թուրք-հունական արդի հարաբերություններում առկա լարվածությունը, ժամանակ առ ժամանակ դրսևորվող ճգնաժամային ու հակամարտային իրավիճակները: Թեև երկու պետությունները գտնվում են ռազմաքաղաքական միևնույն դաշինքում, նրանց միջև տարաբնույթ հիմնախնդիրները, որոնք նաև պատմական հիմք ունեն, տարբեր ժամանակաշրջաններում էական լարվածության ու հակամարտային իրավիճակների, այդ թվում՝ ռազմական գործողությունների պատճառ են դարձել: Ներկայում էլ երկու երկրների միջև ճգնաժամային իրավիճակները վերահսկողությունից դուրս գալու և ռազմական հակամարտության վերածվելու մեծ հավանականություն ունեն:

Ինչպես ատենախոսն է անդրադառնում աշխատանքում՝ Արևելյան միջերկրածովյան շրջանը 19-րդ դարի երկրորդ կեսին ձեռք բերեց աշխարհաքաղաքական նշանակություն Սուեզի ջրանցքի գործարկմամբ, այնպես էլ այսօր հաղորդակցային ու էներգառեսուրսների պաշարների ռազմավարական նշանակությամբ պայմանավորված այդ տարածաշրջանը մնում է աշխարհաքաղաքական սուր մրցակցության ու շահերի բախման կիզակետ: Երկու տարի առաջ Արևելյան միջերկրականում կողմերը կրկին ռազմական բախման եզրին հայտնվեցին: Բացի այդ, այսօր էլ էականորեն աճել է լարվածությունն Էգեյան տարածաշրջանում մի շարք խնդիրների հետ կապված, ինչը ժամանակ առ ժամանակ մեծացնում է ռազմական բախման հնարավորությունը: Ինչպես ատենախոսն է անդրադարձել 1970-80-ական թթ. Էգեյան ծովում առկա խնդիրներին և հատկապես կղզիների ապառազմականացման հարցում բանակցություններին ու քննարկումներին, ապա այսօր էլ այն չափազանց արդիական խնդիր է նաև միջազգային մակարդակում ընթացող քննարկումներում: Թերևս արժե հիշատակել,

որ, ըստ հրապարակված տեղեկատվության, 2020թ. Գերմանիայի կանցլեր Ա. Մերկելն օրակարգ էր բերել Էգեյան ծովում լարվածության թուլացման իր առաջարկը՝ կոչ անելով հունական կղզիների ապառազմականացման դիմաց լուծարել 1975թ. ստեղծված թուրքական էգեյան բանակը, ինչը, բնականաբար, մեծ աղմուկ բարձրացրեց Թուրքիայում: Հիրավի, բացի աշխարհաքաղաքական բարդ իրավիճակը, միջազգային համակարգում ընթացող գործընթացներն ու միջազգային անվտանգային կարգի փոխակերպումները՝ թուրք-հունական հարաբերություններում հակամարտային պոտենցիալը նաև պայմանավորված է ներպետական միավորային մակարդակի գործոններից, ինչն առավել ցայտուն է դրսևորվում Թուրքիայի պարագայում:

Այս համատեքստում ինչպես թուրք-հունական հարաբերությունների պարագայում, այնպես էլ ընդհանրապես տարածաշրջանային ու արտաքին մակարդակներում, մասնավորապես՝ Արևելյան միջերկրականում Թուրքիայի ագրեսիվ քաղաքականությունը պայմանավորված է ներպետական այնպիսի գործոնների համախմբով, ինչպիսիք են օրինակ՝ ռազմականացումը, էլիտայի հավակնոտ նախապատվությունները, ազգայնական, ծավալապաշտական դոմինանտ խոսույթը և այլն: Պատահական չէ, որ ռազմական հավասարակշռությունը Թուրքիայի ու Հունաստանի միջև սկսեց փոխվել ի վնաս Հունաստանի՝ Թուրքիայի հավակնոտ ռազմականացման ու պաշտպանական համակարգի վերաձևման, Հունաստանում տնտեսական վիճակի թուլացման պայմաններում, ինչը Թուրքիայի իշխող էլիտային նոր ինքնավստահություն տվեց: Այս համատեքստում նաև պետք է դիտարկել Լոզանի պայմանագրի վերանայման, Էգեյան ծովում և ընդհանրապես տարածաշրջանում ստատուս-քվոն փոխելու Էրդողանի նախապատվություններն ու դրանցից բխող հայտարարությունները: Ուստի, արդի գործընթացների դիտարկման ու գնահատման տեսանկյունից կարևոր է թուրք-հունական հարաբերություններում առկա հիմնախնդիրների, դրանց լուծման ուղղությամբ տարբեր ձևաչափերով բանակցությունների, կողմերի քաղաքական վարքագծի հետահայաց գնությունը, ինչին և միտված է սույն ատենախոսությունը:

Ներածության մեջ պատշաճ ձևակերպված և հիմնավորված են թեմայի արդիականությունն ու նորույթը, ուսումնասիրության նպատակն ու դրանից բխեցված հետազոտական խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական մոտեցումները, հիմնական օգտագործված գրականության տեսությունը և այլն: Այդուհանդերձ, ցանկալի կլիներ, տեխնիկական առումով հստակ տարանջատված ներկայացվեին ներածության մաս կազմող բաժինները:

Աշխատանքը գրված է պատշաճ գիտական լեզվով, հիմնախնդիրների ու գործընթացների պատճառահետևանքային կապերի լուսաբանման, վերհանման ու վերլուծական քննության շրջանակում՝ աղբյուրագիտական ու մասնագիտական գրականության լայն բազայի հիման վրա: Ատենախոսն օգտագործել է ինչպես թեմային առնչվող սկզբնաղբյուրներ, այնպես էլ հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն մասնագիտական-ակադեմիական գրականություն: Կարծում ենք աշխատանքը հետագայում լրամշակելու հարցում օգտակար կլինի Կիպրոսի ինքնահռչակ թուրքական հանրապետության նախկին նախագահ Ռաուֆ Դենքթաշի՝ տարբեր տարիներին հրատարակված հուշերը և կիպրական խնդրի վերաբերյալ վերջինիս կողմից հեղինակված աշխատանքներին անդրադառնալը:

Աշխատանքում թեմայից բխող գործընթացների տրամաբանական փուլայնացումը, հետազոտական խնդիրներից ածանցվող նյութի ներկայացումն ու քննարկումը կատարված է հստակ:

Եզրակացությունում ամփոփվում են ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները, որոնք համապատասխանում են նպատակից բխեցված և առաջադրված հետազոտական խնդիրներին:

Այդուհանդերձ, աշխատանքի վերաբերյալ առանձնացվել են որոշ դիտողություններ ու առաջարկներ, որոնք կօգնեն ատենախոսին հետագա հետազոտություններում ու սույն աշխատանքի լրամշակումներում:

Ակնհայտ է, որ ՆԱՏՕ-ի համար լրջագույն խնդիր էր դառնում թուրք-հունական լարվածությունն ու հակադիր բևեռի՝ ԽՍՀՄ-ի միջամտությունը: Վտանգվում էր դաշինքի ու հատկապես դրա հարավային սահմանի ֆունկցիոնալ կայունությունը: Ուստի, օրինակ, 1950-ականների երկրորդ կեսերին և 1960-ական թթ. կիպրական

հիմնախնդրի հարցում ՆԱՏՕ-ի ինստիտուցիոնալ դերակատարությունը կամ միջնորդական քայլերը պետք է առավել համակողմանի գնահատվեին, պարզաբանվեին ՆԱՏՕ-ի՝ որպես ինստիտուցիոնալ կառույցի կողմից հակամարտային իրավիճակի կարգավորման ուղղությամբ նախաձեռնություններն ու դրանց հետ կապված խոչընդոտները: Հայտնի է, որ, օրինակ, Դաշինքի գլխավոր քարտուղարությունը և անդամ որոշ երկրներ հենց դաշինքի շրջանակում հանդես են եկել նախաձեռնողականությամբ, նույնիսկ քննարկումներ եղել ՆԱՏՕ-ի խորհրդում, նախարարական կոմիտեում և այլն: Նույնիսկ 1950-ականների վերջերին Գլխավոր քարտուղարներ Հասթինգս Իսմեյի ու Հենրի Սփաքի նախաձեռնությամբ լուծմանն ու հաշտեցմանն ուղղված որոշակի հաջողություններ են գրանցվել: Սակայն, Վաշինգտոնի միջամտությամբ ի չիք է դարձել հաշտեցման ու հակամարտության կարգավորման մեջ ՆԱՏՕ-ի՝ գլխավոր դերակատար լինելու գաղափարը:

Թեև ներկայացվում է Լ. Ջոնսոնի հայտնի նամակի մասին (էջ 56), սակայն, կարելի էր համառոտ անդրադառնալ թուրքական ռազմավարական մտածողության վրա դրա թողած հետևանքներին՝ դա դիտարկելով Թուրքիա-ԱՄՆ դաշնակցային հարաբերություններում երկարատև անվստահության ձևավորման համատեքստում: Թեև Թուրքիա-Հունաստան հարաբերություններում կոնֆլիկտայնությունը ՆԱՏՕ-ի համար լրջագույն խնդիր էր, պակաս կարևոր չէր ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում ի հայտ եկած խորը անվստահությունը: Պատահական չէ, որ, ինչպես էջ 63-ում նշել է ատենախոսը, նաև սրանով պայմանավորված որոշակի փոխակերպումներ տեղի ունեցան Թուրքիա-ԽՍՀՄ հարաբերություններում:

ԱՄՆ-ի կողմից դաշինքային հակամարտության հավանականությունը կանխելու համատեքստում իրականացված քայլերը գնահատելու և պարզաբանելու տեսանկյունից, կարծում ենք, անհրաժեշտ էր անդրադառնալ հետևյալ խնդիրների պարզաբանմանը: ԱՄՆ-ն Սառը պատերազմի իրողություններով պայմանավորված՝ բավական զգայուն էր նաև ՆԱՏՕ-ի իր երկու դաշնակից պետություններում կայուն հակակոմունիստական վարչակարգերի պահպանությամբ: Թուրքիան 1960-ականների կեսերից սկսել էր էականորեն բարելավել հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ, ինչը չէր կարող չանհանգստացնել ԱՄՆ-ին ու ՆԱՏՕ-ին: Մյուս կողմից էլ

Հունաստանում էլ առկա էր վարչակարգի փոփոխության վտանգ, որը կարող էր խնդիրներ առաջացնել ինչպես ԱՄՆ-ի հետ հարաբերություններում, այնպես էլ՝ դաշինքում: Ուստի, կա մոտեցում, որ գնդապետների հեղաշրջմամբ ԱՄՆ-ն կանխեց իր համար հետագա հնարավոր բացասական զարգացումները Հունաստանում, քանի որ Պապանդրեուի հաղթանակը կարող էր լուրջ խնդիրներ առաջացնել դաշինքի համար: Նման հարցերի շուրջ քննարկում էր տեղի ունեցել նույնիսկ ԱՄՆ ԱԱԽ-ում:

Աշխատանքում դաշինքային հակամարտության համատեքստում Թուրքիայի ռազմագործողություններից հետո ՆԱՏՕ-ի շրջանակում ի հայտ եկած անհանգստությունների ու մտավախությունների, երկու դաշնակից երկրների նկատմամբ հետագա քաղաքականության, ընթացող գործընթացների, Թուրքիայի նկատմամբ զենքի էմբարգոյի հարցում ամերիկյան գործադիր ու օրենսդիր մարմինների, ՆԱՏՕ-ի անդամ ազդեցիկ այլ դերակատարների մոտեցումների ու Դաշինքի շրջանակներում տարված քաղաքականության հարցերը լրացուցիչ լուսաբանման կարիք ունեն: Մասնավորապես, կարևոր է դաշինքի միասնականության ապահովման ուղղությամբ Թուրքիա- ՆԱՏՕ, ինչպես նաև թուրք-ամերիկյան երկկողմ ձևաչափով «դաշինքային հակամարտության» կառավարմանն ուղղված քայլերի լուսաբանումը: (Օր.՝ David Rudnick, (1977) NATO and the Cyprus crisis, The Round Table: The Commonwealth Journal of International Affairs 67, No. 266):

Թեև հեղինակը հպանցիկ անդրադառնում է 1975թ. ցամաքային ուժերի կազմում Էգեյան բանակի ստեղծմանը՝ կարևոր է դրա պատճառների ու ՆԱՏՕ-ի ընդհանուր պաշտպանական համակարգի համատեքստում դիտարկումը, քանի որ այն փաստացի, լիովին Թուրքիայի ԶՈՒ-ի իրավասության ներքո էր և ինտեգրված չէր դաշինքի ընդհանուր պաշտպանական համակարգի կառավարման մեջ:

Աշխատանքում (էջ 120) անդրադարձ է կատարվում ԱՄՆ-ի նախաձեռնությամբ թուրք-հունական հարաբերությունների կարգավորման «Ռոջերսի ծրագրին» և Հունաստանին ՆԱՏՕ վերադարձնելու թուրքական արգելանքի վերացմանը: Սակայն, ամերիկյան այս նախաձեռնության մեջ Թուրքիայի համար առանցքային է եղել 1980թ. թուրք-ամերիկյան Պաշտպանական համագործակցության ու տնտեսական համաձայնագրի կնքումը, որն էական նշանակություն ուներ թուրքական ռազմական

համակարգի արդիականացման ու ռազմատնտեսական ոլորտի զարգացման հարցում: Ուստի, այս հանգամանքը կարևոր գործոն էր այդ համատեքստում:

Վերոնշյալ դիտողությունները, որոնք միտված են աշխատանքի բարելավմանը և թեմայի վերաբերյալ նաև հետագա հետազոտությունների ու միգուցե առանձին ուսումնասիրությունների խրախուսմանը, չեն նվազեցնում կատարված հետազոտական աշխատանքի արժանիքները, չեն ազդում ատենախոսության ընդհանուր որակի ու գիտական արժեքի վրա: Այսպիսով՝ քննարկվող ատենախոսությունը կարելի է համարել 1950-1990-ական թթ. դաշինքային կոնֆլիկտների համատեքստում թուրք-հունական հարաբերությունների ուսումնասիրությանը նվիրված հաջողված ինքնուրույն հետազոտություն:

Ռ. Խաչատրյանի՝ «Թուրք-հունական հարաբերությունները «դաշնակցային կոնֆլիկտների» համապատկերում (1950-1990-ական թթ.) թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին, ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին և ատենախոսության հեղինակն արժանի է Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ

30 հունիսի 2022թ.

Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտի տնօրեն,
պ.գ.դ. դոցենտ
Գ. Ա. Սարգսյան